ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

(«Ալմաստ» Բաց Բաժնետիրական Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի)

Երկու հազար ինը թվականի հունիսի հինգին, ժամը՝ 15:00-ին «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց փողոց թիվ 28» հասցեում տեղի ունեցավ «Ալմաստ» Բաց Բաժնետիրական Ընկերության /այսուհետև՝ «Ընկերություն»/ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը /այսուհետև՝ Ժողով/:

Մասնակցում էին Ընկերության թվով 418 217 (չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր տասնյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող թվով 304 368 (երեք հարյուր չորս հազար երեք հարյուր վաթսունութ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները ներքոհիշյալ կազմով՝

1. Թվով 297 071 հատ (71.0327414 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող **«ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ՔԱՄՓՆԻ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը**, ի դեմս գործադիր տնօրեն Ռուդիկ Մկրտումյանի՝ 148 535 հատ հասարակ անվանական բաժնետոմսի ձայնի իրավունքով, ինչպես նաև, համաձայն 22.05.2009թ. տրված թիվ 035/1 լիազորագրի. 148 536 հատ հասարակ անվանական բաժնետոմսի ձայնի իրավունքով հանդես էր գալիս **Խաչիկ Զաքարյանը** (անձնագիր՝ AA 0252797, տրված՝ 08.09.1995թ., 001-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք. Երևան, Ավետիսյան փող. 80, բն. 47),
2. Թվով 2868 հատ (0.6857684 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Սահակ Հակոբի Հակոբյանը**,
3. Թվով 2049 հատ (0.4899370 %) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Ահարոն Վաչիկի Հարությունյանը**,
4. Թվով 656 հատ (0.1568564%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Աննա Առուստամյանը**,
5. Թվով 549 հատ (0.1312716%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Կոլյա Հովհաննեսի Կարապետյանը**,
6. Թվով 486 հատ (0.1162076%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Վարազդատ Հրաչիկի Ներսիսյանը**,
7. Թվով 160 հատ (0.0382577%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Գագիկ Գևորգի Հովսեփյանը**,
8. Թվով 149 հատ (0.0356274%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Ռայա Աշոտի Անանյանը**,
9. Թվով 142 հատ (0.0339537%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Արտաշես Մաքևոսի Մանուկյանը**,
10. Թվով 135 հատ (0.0322799%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Լևոն Պողոսի Հալաջյանը**,
11. Թվով 103 հատ (0.0246284%) հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր **Թևան Ռուբենի Արղոյանը**:

Ապահովված էր Ժողովի անցկացման համար անհրաժեշտ (72,7775295 %) քվորումը:

Ժողովը նախագահում էր Խաչիկ Զաքարյանը, արձանագրությունը վարում էր Լիլիթ Մաղոյանը: Նիստին ներկա էին Ընկերության տնօրեն և տնօրենների խորհրդի անդամ Սերգեյ Մկրտչյանը, գլխավոր հաշվապահ Դոնարա Սայադյանը, տնօրենների խորհրդի անդամ և բաժնետեր՝ Վարազդատ Ներսիսյանը, ինչպես նաև Վերստուգող Ալեքսանդր Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:
2. Ընկերության տնօրենի զեկույցը 2008 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:
3. Ընկերության 2008 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:
4. Ընկերության 2008 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:

5. Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի, շահույթի և վնասի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցը:
6. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:
7. Ընկերության առողջուն իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:

**ԼՍԵՑԻՆ - հարց 1՝**

Առաջին հարցի կապակցությամբ ժողովի նախագահին առաջարկեց հաստատել Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը՝ 3 անդամներից, ինչպես նաև Աննա Առուստամյանին, Ջուլիետա Դալլաքյանին և Սահակ Հակոբյանին վերընտրել Ընկերության Հաշվիչ հանձնաժողովի անդամների պաշտոնում՝ 1 տարի ժամկետով:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| Կողմ | - 304 368 | ձայն |
| Դեմ | - 0 | ձայն |
| Ձեռնպահ | - 0 | ձայն |

**Ժողովը որոշեց՝**

- **Հաստատել Ընկերության Հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը՝ 3 անդամներից:**
- **Ընկերության Հաշվիչ հանձնաժողովի անդամների պաշտոնում վերընտրել Աննա Առուստամյանին, Ջուլիետա Դալլաքյանին, Սահակ Հակոբյանին:**

**ԼՍԵՑԻՆ - հարց 2՝**

Երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության տնօրեն Սերգեյ Մկրտչյանը՝ ներկայացնելով Ընկերության 2008 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ ամփոփ զեկույցը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| Կողմ | - 304 368 | ձայն |
| Դեմ | - 0 | ձայն |
| Ձեռնպահ | - 0 | ձայն |

**Ժողովը որոշեց՝**

- **Ընկերության տնօրեն Սերգեյ Մկրտչյանի կողմից ներկայացրած 2008 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ զեկույցը ընդունել ի գիտություն:**

**ԼՍԵՑԻՆ - հարց 3՝**

Հարցի կապակցությամբ հանդես եկավ Ընկերության Վերստուգող Ալեքսանդր Հարությունյանը և ներկայացրեց 2008 թվականի ընթացքում Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ իր եզրակացությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| Կողմ | - 304 368 | ձայն |
| Դեմ | - 0 | ձայն |
| Ձեռնպահ | - 0 | ձայն |

**Ժողովը որոշեց՝**

- **Ընկերության Վերստուգող Ալեքսանդր Հարությունյանի կողմից ներկայացված 2008թ. ընթացքում Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ընդունել ի գիտություն: (Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ Վերստուգողի եզրակացությունը կցվում է սույն արձանագրությանը):**

ԼՍԵՑԻՆ - հարց 4`

Չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Դոնարա Սայամյանը և ներկայացրեց Ընկերության 2008 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ Ընկերության աուդիտն իրականացնող անձի՝ «ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած աուդիտորական եզրակացությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 304 368 ձայն
Դեմ - 0 ձայն
Ձեռնպահ - 0 ձայն

**Ժողովը որոշեց՝**

- **Ընկերության աուդիտն իրականացնող անձի՝ «ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2008թ. ընթացքում Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացությունն ընդունել ի գիտություն: (Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը կցվում է սույն արձանագրությանը):**

ԼՍԵՑԻՆ - հարց 5`

Ելույթ ունեցավ Ընկերության Ժողովի նախագահը՝ առաջարկելով հաստատել Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվետվությունը և ընկերության հաշվապահական հաշվեկշիռը:

Հարցի առթիվ ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Դոնարա Սայամյանը հայտնեց, որ 2008 թվականի ֆինանսական արդյունքներով Ընկերությունը աշխատել է 1 328 000 (մեկ միլիոն երեք հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային վնասով, այդ կապակցությամբ առաջարկեց հաստատել Ընկերության վնասի չափը, որի պատճառով 2008 թվականի ֆինանսական արդյունքներով շահութաբաժին չի կարող բաշխվել:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 304 368 ձայն
Դեմ - 0 ձայն
Ձեռնպահ - 0 ձայն

**Ժողովը որոշեց՝**

1. **Հաստատել Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվետվությունը (Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվետվությունը կցվում է սույն արձանագրությանը):**
2. **Հաստատել Ընկերության 2008 թվականի հաշվապահական հաշվեկշիռը (Ընկերության 2008 թվականի հաշվապահական հաշվեկշիռը կցվում է սույն արձանագրությանը):**
3. **Հաստատել 2008 թվականի ֆինանսական արդյունքներով Ընկերության հաշվեկշռային վնասի չափը՝ 1 328 000 (մեկ միլիոն երեք հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:**
4. **Ընկերության 2008 թվականի ֆինանսական արդյունքներով շահութաբաժին չբաշխել:**

ԼՍԵՑԻՆ - հարց 6`

Հարցի կապակցությամբ Ընկերության Ժողովի նախագահը հայտնեց, որ համաձայն «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են մեկ տարի ժամկետով, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հաստատել Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմը և իրականացնել խորհրդի անդամների ընտրություն:

Միաժամանակ, Ժողովի նախագահի կողմից առաջարկվեց հաստատել խորհրդի անդամների քանակական կազմը՝ 7 անդամներից և բաց քվեաթերթիկում առաջադրված թեկնածուների՝ Գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ ընտրել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներ:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:
Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

| | |
|---|---|
| Խաչիկ Զաքարյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Օլգա Գասպարյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Մանվել Սահակյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Համբարձում Սինասյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Վարազդատ Ներսիսյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Սերգեյ Սկրտչյան | - Կողմ` 304 368 ձայն |
| Ռուբեն Ներսիսյան | - Կողմ` 304 368 ձայն |

**Ժողովը որոշեց`**

1. Հաստատել տնօրենների խորհրդի անդամների քանակական կազմը` 7 անդամներից:
2. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների պաշտոնում վերընտրել`

- **Խաչիկ Զաքարյանին** (անձնագիր. AA 0252797, տրված հազար ինը հարյուր իննսունինինգ թվականի սեպտեմբերի ութին. 001-ի կողմից, հաշվառված` ՀՀ ք. Երևան, Ավետիսյան փող. 80, բն. 47),
- **Սերգեյ Սկրտչյանին** (անձնագիր AA 0452972, տրված 31.07.1996թ. 003-ի կողմից, հաշվառված`ՀՀ ք. Երևան, Դեմիրճյան փողոց. 27 1 շենք, բնակարան 16):
- **Համբարձում Սինասյանին** (անձնագիր AE 0350241 տրված 09.07.1999թ. 012-ի կողմից, հաշվառված` ՀՀ ք.Երևան. Շինարարների 10/1 շենք, բնակարան 127/,
- **Օլգա Գասպարյանին** (անձնագիր. AC 0293011, տրված 22.05.1998թ. 007-ի կողմից, հաշվառված`ՀՀ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ազատության 12/2 շենք, բնակարան 52),
- **Մանվել Սահակյանին** (անձնագիր. AG 0688773, տրված 21.04.2006թ. 011-ի կողմից, հաշվառված`ՀՀ ք. Երևան, Քաջազնունու 10 շենք, բնակարան 3),
- **Վարազդատ Ներսիսյանին** (անձնագիր AA 0521532, տրված 31.07.1996թ. 007-ի կողմից, հաշվառված` ՀՀ ք. Երևան, Նորքի 4-րդ զանգված, Ա. Հովհաննիսյան 20 շենք, բնակարան 24),
- **Ռուբեն Ներսիսյանին** (անձնագիր` AA0359149, տրված` 06.04.1996թ., 011-ի կողմից, հաշվառված` ՀՀ ք. Երևան, Մաշտոցի փողոց, շենք 24, բն. 8 հասցեում):

**ԼՍԵՑԻՆ - հարց 7`**

Հարցի կապակցությամբ Ընկերության ժողովի նախագահ առաջարկեց կատարել Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրություն` այդ պաշտոնում առաջադրելով «ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ-ի թեկնածությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| Կողմ | - 304 368 | ձայն |
| Դեմ | - 0 | ձայն |
| Ձեռնպահ | - 0 | ձայն |

**Ժողովը որոշեց`**

- **Աուդիտն իրականացնող անձի պաշտոնում ընտրել «ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ-ին (լիցենզիա ԱԾ N052, տրված` 24.09.2007թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից):**

Ժողովում ընդգրկված հարցերը սպառվեցին և Ընկերության ժողովը հայտարարվեց փակված:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ` Խ. ԶԱՔԱՐՅԱՆ

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ` Լ. ՍԱԴՈՅԱՆ

Սույն արձանագրությունը կազմված է 10.06.2009թ. դրությամբ. 2 օրինակից և բաղկացած է 4 թերթից: